



Արեւմտեան
Հայոց



Հայաստանի
Համապետմար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Արեւմտեան Հայաստանի Հայերուն Ազգային Խորհուրդը կը հրավիրէ աշխարհի բոլոր հայերուն, հայրենահաններուն եւ ցեղասպանութենէն ճողոպրածներու ժառանգորդներուն լրացնել եւ ստորաբել հետեւեալ յայտարարութիւնը ուղղուած ՄԱԿ-ի բարձրագոյն կոմիսարեաթին (հանձնաժողովին), պաշտօնապէս պահանջելով մեր գոյատեւման, ազատ ինքնորոշման հիմնական եւ տարրական իրաւունքները եւ ամենակարճ ժամանակամիջոցին, դրկել հետեւեալ հասցէին: (*)

Ուղղարկուելիք թղթածրարը, ստանալով ձեր համաձայնութիւնը կը ներկայացուի հետեւեալ ձեւով. Համապետմարի ՄԱԿ-ի հռչակարի առաջին եւ 55-րդ յօդուածներու: Համապետմարի Ազգերու Մնայուն Ատեանի (Tribunal Permanent des Peuples) դատական համաձայնարի:

Համապետմարի 90 տարի հայրենահան Արեւմտեան Հայաստանի հայերու միասնական ցանկութեան: Ընդունելով, որ ինքնահաստատման իրաւունքի կիրարկումը պէտք է նկատուի հիմնական կորիզը հաշտեցման գործընթացի մը եւ միջազգային հանրութեան կարողականութիւնը ուղղուած ըլլայ Արեւմտեան Հայաստանը առնելու խաղաղ գոտիի մէջ:

Ալժէի մէջ 1976 թուին ընդունուած ժողովուրդներու Իրաւունքներու Միջազգային Յայտարարութեան 5-րդ յօդուածի համաձայն բոլոր ժողովուրդները բացայայտ եւ անփոփոխ իրաւունք ունին ինքնորոշման :

Ամենայն ազատութեամբ որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը, առանց արտաքին օտար ուժերու միջամտութեան:

Ամէն ժողովուրդի միջութեան իրաւունքին վերջ (յօդուած 1) չկայ ավելի հիմնական իրաւունք՝ քան ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը:

Բնականաբար այս իրաւունքի հաստատմամբ է, որ կիրագործուի ժողովուրդներու միւս բոլոր իրաւունքներու մեծ մասը. ինչպէս յարգանք ազգային եւ մշակութային ինքնութեան (յօդուած 2), հողային սեփականութեան էական իրաւունք (յօդուած 31), գաղութային լուծի եւ օտար տիրապետութենէ զերծ ըլլալու իրաւունք՝ (յօդուած 6), օգտագործման մենաշնորհում իր բնական հարստութեան եւ աղբիորներու (յօդուած 8), ընտրութեան իրաւունքի ընկերային եւ տնտեսական իրաւիճակներու (յօդուած 11):

Լօզանի դաշնագրով (1923) հաստատուած մեր ինքնորոշման իրաւունքի մերժումով, Մենք՝ Արեւմտեան Հայաստանի հայերս, հետեւողականօրէն զրկուած ենք հիմնական եւ միւս մեր իրաւունքներէն:

Որպէս զի վերջնականապէս դադրի ցեղային խտրականութիւնը Արեւմտեան Հայաստանի հայերու հանդէպ, եւ որ մենք ըլլանք պաշտպանուած ու պաշտպանինք միջազգային օրէնքներով մեր ինքնութիւնը, պատմութիւնը, լեզուն, մշակույթը եւ մեր զաւակներուն ապագան. Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային Խորհուրդը, կը խնդրէ ՄԱԿ-ի յանձնաժողովի նախագահին, օժանդակել Արեւմտեան Հայաստանի հայերուն, ցեղասպանութեան ենթարկուած եւ ընդունուած Ազգերու Մնայուն Ատեանին կողմէ (Ապրիլ 1984), ձեռք բերել այս հիմնական եւ տարրական, բացայայտ եւ անփոփոխ ինքնորոշման իրաւունքը, ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի հաստատումով:

Մականուն :..... Աղջկայ մականուն
Անուն :.....ծնած :.....երկիր.....
բնակավայր :.....քաղաք :.....code
երկիր :հեռախոս :.....email.....
Ծագում (Արեւմտեան Հայաստան).....

նշում, «lu et approuve» թուական եւ ստորագրութիւն

ԱՀՀԱԽ
Արեւմտեան Հայաստանի Հայոց Ազգային Խորհուրդը
BP 61
92224 BAGNEUX CEDEX - FRANCE